23794

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊՐՈՖՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՍՈՑՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ

(Ադրպրոֆխորհրդի նախագահության վորոշումները)

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

331.87
Ա-21

ԱԴՐՊՐՈՖԽՈՐՀՈՒՐԴ
ԽՄԲ. ՀՐԱՏ. ԲԱԺԻՆ
ԲԱԳՈՒ—1931

331.87
Ա-21

Тип. „Красный Восток“ Азполиграфа
ВСНХ. Баку, Карантинная, 84.
Главлит 1618. С.-ф. Б-6.
Зак. 3666.—2000.

10 MAR 2010
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊՐՈՖԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ՍՈՑՄՐՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հնգամյակի անցած յերկրորդ տարին սոցիալիստական շինարարության գործում հանդիսացավ բանվոր դասակարգի նոր ու խոշորագույն նվաճումների տարին: Հնգամյակի պլանի առաջադրությունները՝ բոլոր հիմնական ցուցանիշներում՝ իրագործված են նշանակալից չափով գերակատարումով:

Խորհրդային Միության տնտեսական այդ վերելքի մեջ վճռական դեր խաղացին,—մեր կուսակցության ուղիղ քաղաքականությունը, բանվոր դասակարգի ու կոլխոզնիկների միլիոնավոր մասսաների վիթխարի ակտիվությունը ու աշխատանքային ստեղծագործական ենտուզիազմի հսկայական աճումը (սոցմրցություն, հարվածայնություն, հանդիպական պլաններ), վորի նշանի տակ անցան հնգամյակի առաջին յերկու տարիները (ՎԵԿԱՊԲ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի վո-

23794

-01. 2013



բոշումից)։ Կուսակցությունը և խորհրդային պետությունը, կուսակցության XVI համագումարի վորոշման հիման վրա, 1931 թ. համար սոցիալիստական շինարարությունն ծավալելու ել ավելի բարձր տեմպեր են նախագծել, վորը և ընդունվել է ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումի և Խորհրդային Միության Կենտգործկոմի 5-րդ նստաշրջանի կողմից։

1931 տարին, վորը հանդիսանալու է «Հնգամյակը 4 տարում» լոզունգը գործով—իսկ արդյունաբերության մի քանի ճյուղերում ել ավելի կարճ ժամանակում—իրականացնելու, Խորհրդային Միության սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման գործը ավարտելու տարին, բանվոր դասակարգի ու նրա կազմակերպությունների առաջ բոլոր ուժերի ու հնարավորությունները մոբիլիզացիայի խնդիրն է դնում՝ ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի և Համամիութենական Կենտգործկոմի նստաշրջանի ընդունված վորոշումների իրականացնելու և աշխատանքները մարտական տեմպերով տանելու համար պայքարելու։

Մեր կուսակցության և կառավարության առաջադրությամբ Բաքվի հանքագործները այս տարի պետք է տան 15.327 հազար տոնն նավթ, Ադրբեջանում պետք է ցանվի 205.000 հեկտար բամբակ, Ազռիբտրեստի ձկնորսարաններն ու Ազախրակոոպույի արտելները այս տարի պետք է վորսան 900.000 ցենտներ ձուկ, յերկաթուղային ու ջրային աշխատավորները պետք է ապահովեն լայնացրած ծրագրով նավթամթերքների և բեռների փոխադրությունը։ Հըն-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР

56456-66



գամյակի վճռական ընթացիկ տարում վոչ պակաս կարևոր խնդիր է հանդիսանում նույնպես բամբակային ռայոններում տնտեսությունների 50% կոլեկտիվացումը և գյուղացիական տնտեսությունների 20—25%-ը՝ Ադրբեջանի մնացած ռայոններում։ «Նախագծված պլանի, նրա բոլոր մասերում և առանձնապես նրա վորակական ցուցանիշների՝ անպայման իրականացման վրա պետք է կենտրոնացնել մեծագույն ուշադրություն, մեծագույն յեռանդ» (ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի վորոշումից)։

Այժմ արդեն վերջանում է 1931 թ. 1-ին յեռամսյակը։ Հաստատելով բարձր, բայց լիովին ռեալ, արդեն հաղթանակներով հաստատված պայմանավորված յերրորդ տարվա կոնտրոլային թվերը, ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումը նախազգուշացրեց, վոր հենց սկզբից անհրաժեշտ է դարձել՝ մեր առաջ դրված խնդիրների լուծման վրա ոպորտունիստական «ինքնահոսի», «տարերայինի»-ի վրա հույս դնելուն։ Այդ խնդիրների լուծումը «աշխատավորության լայն մասսաների ակտիվության հետագա աճում և աշխատանքային վերելք» կպահանջի (սոց.-մրցություն, հարվածայնություն, հանդիպակաց արդֆինպլան) և հետագա վճռական պայքար՝ աջ թեքման թեորիայի ու պրակտիկայի դեմ, «ձախ» շեղումների և այդ թեքումների հետ հաշտվողականության դեմ։

Հնգամյակի 3-րդ տարում ել ավելի բարձր աստիճանի վրա պետք է բարձրացնել սոցմրցությունն ու հարվածայնությունը՝ առանց բացառության բոլոր

ձեռնարկներում, գործարաններում, ֆաբրիկներում, հանքերում, տրանսպորտում, նոր կառուցումներում, սովխոզներում, կոլխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում և այլն, պետք է ամրապնդվեն այն նվաճումները, վոր ձեռք են բերվել միջանցիկ հարվածային բրիգադների, հասարակական բուքսիրների, կոնտրպլանային պլանների աշխատանքի միջոցով, աշխատանքի կոնկրետ-գործառնական պլանների անցնելով և այլն, պրոֆմիությունների մարտական խնդիրներն են հանդիսանում՝ աշխատանքային սոցիալիստական այդ բարձրագույն ձևերը և նրանց նվաճումները մի ձեռնարկից մյուսը տեղափոխել, անշեղ շարունակել հարվածայինների ու մրցողների շարքերը նոր բանվորների գրավել, հատկապես արդյունաբերության մեջ նոր յեկած բանվորներին, բանվորուհիներին և յերիտասարդությանը, կազմակերպել նոր հարվածային բրիգադներ՝ հարվածային ցեխերից, բաժիններից ու անցնել հարվածային գործարանների, ֆաբրիկների, հանքերի, սովխոզների, կոլխոզների և այլն:

Պետք է վերացնվեն առանձին ձեռնարկներում գոյություն ունեցող դեպքերը.—պրոֆկազմակերպությունների, արտադրական խորհրդակցությունների և մեքենա-տրակտորային կայանների կողմից սոցմրցության և հարվածայնության անբավարար ղեկավարությունը, սոցմրցության և հարվածայնության խնդիրների կուլտ-լուսավորական աշխատանքի անբավարար սպասարկումը, նույնպես և արդյունաբերության ինքնամբացումը, սոցմրցման արդյունքների վատ հաշվառումը, ինքնաստուգման բրիգադների առաջարկությունների դեռ վոչ լրիվ իրագործումը, և մյուս թույլ ճյուղերն՝ աշխատանքի այդ կարևոր մասում:



Յելնելով դրանից Անդրպրոֆխորհրդի նախագահությունը անհրաժեշտ է համարում մարտի 20-ից մինչև ապրիլի 20-ը սոցիալիստական 3-րդ տարին հիշատակելու համար սոցմրցության և հարվածայնության մասսայական ինքնաստուգում անցկացնել՝ ստուգելու սոցպայմանագրերի իրագործումը, նորերի կնքումը, նույնպես և աշխատանքի սոցիալիստական նոր ձևերի ամրապնդումը և կազմակերպումը:

Սոցմրցության և հարվածայնության մասսայական ինքնաստուգումը պետք է անցկացնել, վորպես պրոֆմիությունների կարևոր տնտեսական-քաղաքական աշխատանք՝ բոլոր ձեռնարկներում, տրանսպորտում, սովխոզներում, մեքենա-տրակտորային կայաններում և այլն, մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով հնգամյակի 3-րդ տարվա սոցիալիստական շինարարության պլանների հաջող կատարման և գերակատարման համար:

Ինքնաստուգումը պետք է ամբողջովին շաղկապված լինի բանվորների ու աշխատավորների լայն մասսաների մեջ ՎԿԿԱՊԸ-ի (բ) Կենտկոմի և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովի դեկտեմբերյան պլենումի վորոշումների և արդյունաբերական աշխատավորների կոնֆերանսում ընկ. Ստալինի ճառի ընդհանրացման և մասսաներին այդ վորոշումների իրագործման շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու հետ:

Ինքնաստուգման պրոցեսը անհրաժեշտ է նմանապես սերտ շաղկապել մասսաների մեջ համամիութենական պրոֆխորհրդի հինգերորդ պլենումի վորոշումների լայն կերպով ընդհանրացնելու հետ, ինչպես պրոֆկազմակերպությունների աշխատանքների հետագա լավացման, նույնպես և ուրիշ հարցերի շուրջը և ապահովել դրանց լավագույն կերպով իրագործումը տեղերում:

# ՍՈՑՄՐՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ

*1. Ինքնաստուգման ամբողջ աշխատանքը տանելու համար ամեն մի հիմնարկում, տրանսպորտում, սովխոզում, մեքենա-տրակտորային կայանում և ուր. հարվածային կամավորներից բրիգադներ են կազմակերպվում, վորոնց մեջ գրավում են կուսակցական և կոմսոմոլի ակտիվը, ստորին պրոֆակտիվը, արտադրական խորհրդակցության ակտիվը, ինժեներատեխնիկական աշխատավորները և տնտեսավարները:*

*Ինքնաստուգման ժամանակ խոշոր հիմնարկներում ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովներ են կազմակերպվում, վորոնց շուրջը կազմվում են ինքնաստուգիչ բրիգադները.*

*ա) այն հիմնարկներում, ուր կան ցեխեր, բաժանմունքներ, (հերթափոխություն, վախտա), կազմակերպում են ցեխային, փոխարինող բրիգադներ.*

*բ) յեթե ցեխերը կամ հերթափոխությունները մրցում են ուրիշ ցեխի, հերթափոխության հետ, ապա ինքնաստուգման ամեն բրիգադա իր աշխատանքը տանում է մրցող ցեխի կամ, հերթափոխության ներկայացուցչի մասնակցությամբ: Ջափազանց անհրաժեշտ է նման փոխադարձ ներկայացուցչությունը՝ նույնպես մրցող հիմնարկությունների մեջ:*



*2. Ինքնաստուգման բրիգադների կազմակերպման, ինքնաստուգման խնդիրների և մեթոդների հարցը նախորոք դրվում է ստորին կոմիտեի ընդլայնած պլենումի նիստին, ուր մասնակցում են պրոֆակտիվը, արտադրական խորհրդակցության ակտիվը, ներգրավելով հարվածայիններին, վորտեղ միաժամանակ վճռվում են ստուգման հետ կապ ունեցող բոլոր հարցերը՝ (բրիգադների, խմբակների թիվը, ինքնաստուգման և ռացպայմանագրերի վերականգնման ամբողջ աշխատանքի պլանը և օրացուցային ժամկետները): Դրանից հետո ֆաբգործկոմը կամավորության հիմունքներով բրիգադներ է կազմակերպում:*

*3. Բրիգադների կազմակերպելուց անմիջապես հետո, այդպիսիները պետք է հրավիրվեն ու հրահանգվեն: Արտադրական խորհրդակցությունների կազմակերպիչները օգնում են նրանց ինքնաստուգման պլանի կազմելուն՝ համաձայն տվյալ բրիգադի խնդիրների, վորից հետո վերջինս բոլոր առաջադրությունները բաժանում է բրիգադների առանձին խմբակների կամ մասնակցողների մեջ:*

*Ինքնաստուգման բրիգադների աշխատանքը կատարվում է գործարանային վարչության, ֆաբգործկոմի, արտադրական խորհրդակցության նյութերի հետ ծանոթանալու և հարվածային բրիգադների ու առանձին հարվածայինների և մրցողների հետ զրուցելու միջոցով:*

*4. Ինքնաստուգման պրոցեսում անհրաժեշտ է վոչ միայն նշել աշխատանքի թերությունները ու թույլ կողմերը, այլ և մրցող հարվածայինների ու հենց իրենց՝ ինքնաստուգող բրիգադների օգնությամբ*

գործով ցույց տալ թե ինչպես պիտի վերացնել այդ թերությունները։

5. Ինքնաստուգման ժամանակամիջոցում միություններում կազմակերպել միջանցիկ բրիգադներ, ինչպես օրինակ, ա) հանքագործների (հորափորման, նավթահանման և նավթի մշակումը ստուգելու համար); բ) յերկաթուղայինների ու ջրաշխատավորների (նավթամթերքների տեղափոխությունը ստուգելու համար), գ) մետաղագործների (ստուգել նավթահանքերը այն սարքավորումներով, վորը պատրաստվում է Շմիդտի, Մոնտինի, Ձերժինսկու և մյուս գործարաններում), դ) սննդագործների (գարնան ձկան վորսը ստուգելու համար), յե) ջրաշխատավորների, յերկաթուղայինների (ձկան մթերքները և բեռները ձկնորսարաններին հասցնելը ստուգելու համար), զ) խորառևտրի (ձկնորսներին ու բանվորներին արդյունաբերական մթերքներ մատակարարելու համար)։ Նույնը մյուս միություններում և աշխատանքի ճյուղերում (բամբակացանը, անպետք յերկաթեղենի հավաքելը և այլն)։

6. Ինքնաստուգումը միաժամանակ պետք է օգտագործել և հարվածայինների շարքերը «կեղծ-հարվածայիններից» մաքրելու, այնպիսիներին, վորոնք չարդարացրին մեր յերկրի սոցիալիստական շինարարության ֆրոնտի առաջավոր մարտիկի բարձր կոչումը։

7. Ինքնաստուգման աշխատանքների ընթացքում լայն ծավալել հին սոցպայմանագրերի վերակնքման և նորերի կնքման աշխատանքները և այդ



պայմանագրերը բանվորների ընդհանուր ժողովների, կոնֆերանսների միջոցով ձևակերպելուն։

8. Ինքնաստուգումը կազմակերպելու և արդֆինպլանի իրագործմանը գործնական օգնություն ցույց տալու, սոցմրցությունն ու հարվածայնությունը ծավալելու, աշխատանքի սոցիալիստական նոր ձևերը կազմակերպելու և ամրապնդելու համար միությունների կենտրոնական վարչությունները Ադրպրոֆխորհրդից ու միությունների կենտրոնական վարչություններից մոբիլիզացիայի են յենթարկում 75 պատասխանատու աշխատավորների և անմիջապես ուղարկում են ավելի խոշոր ձեռնարկներն ու ռայոնները։

9. Անհրաժեշտ համարել առանձին միությունների կենտրոնական վարչությունների, նույնպես և ֆաբգործկոմների միջև սոցմրցություն կազմակերպելը՝ ինքնաստուգումը լավագույն կերպով տանելու և կուլտ-սպասարկման համար, մոբիլիզացիայի յենթարկելով ու այդ գործի մեջ գրավելով բանվորական լայն մասսաներին։

# ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

## ՍՈՑՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ

*Ինչ ձեռնարկության հետ է մրցում տվյալ հիմնարկությունը, գոյություն ունի՞ արդյոք կնքված պայմանագիր, յե՞րբ և վորտեղ է քննվել ու հաստատվել, արդյո՞ք այդ պայմանագիրը բավականին ընդհանրացված է մասսաների մեջ, արդյո՞ք ֆաբգործկոմի կողմից կազմակերպված է լրիվ սոցպայմանագրի իրագործման ստուգումը, ինչ է յերևան բերված ու առաջարկված՝ կյանքի մեջ կիրառելու համար։*

*Տնտեսորգանը վորքան է նպաստել այդ պայմանագիրը կյանքի մեջ կիրառելուն, նույնպես և պրոֆկազմակերպության մասնակցությունը պայմանագրի իրացումը ապահովելու գործում և ինչ չափով է վերակառուցվել ամբողջ կուլտուր-լուսավորական աշխատանքը։ Աշխկոմկուսի և Կոմյերիտմիության անդամների մասնակցությունը՝ պայմանագրի կյանքում կիրառելու աշխատանքում։ Վերջապես և յերբ է քննության յենթարկվել սոցպայմանագրի իրացման չափի հարցը։ Պայմանագրի իրացմանը ինժեներա-տեխնիկական աշխատավորներները ինչպիսի գործնական օգնություն են ցույց տվել։*



*Սոցպայմանագրի կյանքում կիրառելու արդյունքներն ու նվաճումները.—արտադրանքի մշակման և նրա հատկության, աշխատանքի արտադրողականության, ինքնարժեքի իջեցման, բրակի ու պրոգուլների պակասեցման, ներքին միջոցների մոբիլիզացիայի կողմից։ Յեթե ցեխը, բաժանմունքը կամ հերթափոխությունը մրցել է ուրիշ ցեխի, հերթափոխության հետ, ապա պարզել թե արդյոք գոյություն է ունեցել պայմանագիր և ինչպես է իրագործված։*

*Ցեխի աշխատանքի արդյունքները համեմատել այն պարտավորությունների հետ, վորը ընդունված է այդ պայմանագրի մեջ. ինչպես է կազմվել ցեխային սոցպայմանագիրը և ինչպես են մասնակցել բանվորները նրա կազմելու և ընդունելու աշխատանքներում։*

*Ցեխի, բաժանմունքի, հերթափոխության և ձեռնարկի աշխատանքի պայմանները ամբողջովին սոցմրցման ժամանակաշրջանում.—հումքի մատակարարումը, նրա հատկությունը, ժամանակին նյութերի, գործիքների մատակարարումը, ներքին արտադրական տրանսպորտի դրությունը։ Մրցման ընթացքում դրա հետ կապ ունեցող ինչպիսի դժվարություններ ու խոչընդոտներ են ծագել։*

*Դրա հետ միաժամանակ ստուգել հարվածայինների, հարվածային բրիգադների, ցեխերի և այլ. պայմանագրերի փաստորեն իրագործումը՝ բոլոր ցուցանիշներով։*

*Ստուգել նույնպես անհատական մրցման պրակտիկան։ Բանվորների ինչպիսի թիվ է ընդգրկված, կնքված են արդյոք կոնկրետ պայմանագրեր, ինչպիսի պայմաններ են արդեն հանդիսանում անհատա-*

կան մրցումը ծավալելուն, արդյոք պրոֆակտիվը, Ագրկոմկուսի և Կոմերիտմիության անդամները և հարվածայինները անհատական մրցման վերաբերմամբ օրինակ են ծառայում ուրիշներին թե վոչ։

## ՀԱՏՈՒԿ ՅԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (ԸՍՏ ՀԱՇՎԵԿՇՌԻ), 1931 Թ. ԱՐԴՖԻՆՊԼԱՆԻ ԻՐԱՑՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԻՆՉԵՎ ԲԱՆՎՈՐԻ ՏԵՂԸ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՍՏՈՒԳՈՒՄԸ

> «Կուսակցության և պրոֆմիությունների կարևորագույն խնդիրն է հանդիսանում մրցման և հարվածայնության շարժումը դնել ամենաբարձր աստիճանի, այդ շարժումը բանվորական մասսաների դասակարգային դաստիարակության իսկական դպրոցի վերափոխել, շարժման ղեկավարությունը բարելավել, կարճ ժամանակամիջոցում ձեռնարկներում աշխատող բոլոր կոմունիստներին ու կոմերիտականներին մրցության և հարվածայնության մեջ գրավել»։ (ՎԸԿԱՓՆ-ի (բ) XVI համագումարի վորոշումից)։

Հատուկ յեռամսյակի հաշվեկշռի քննելու և մշակելու դեպքում անհրաժեշտ է մանրամասն ստուգել վոչ միայն արդֆինպլանի՝ բանվորների կենցաղը բարելավելու ֆոնդի, աշխատանքի պաշտպանության միջոցառումների, բնակկառուցման, գյուտարարության և այլ. համար հատկացված գումարների ծախսման



իրագործումը, այլ և առաջին հերթին արդյունաբերական առաջադրությունը, հիմնական կառուցումների առաջադրությունը, արդյունաբերության ռացիոնալիզացիայի համար ձեռք առած միջոցների, կադրերի պատրաստելու և այլ հարցերի համար տրված առաջադրությունները։

Ընթացիկ տարվա 2 ամսվա արդֆինպլանի իրացման ստուգումը պետք է կատարվի արդֆինպլանի հիմնական ցուցանիշներով.—արտադրանքի բաց թողնելու, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրականության, աշխատանքային դիսցիպլինայի և բանվորական ուժի հոսանունության դրությունն և դրանց դեմ տարվող պայքարի, ռացիոնալիզատորական միջոցառումների և ներքին միջոցների ոգտագործման պլանի իրացման ընթացքը։

Արտադրած ապրանքի հատկության դրությունը ստուգելու ժամանակ ինքնաստուգման բրիգադները նույնպես պետք է ծանոթանան որինակելի հարվածային բրիգադների աշխատանքի դրության հետ, նրանց նվաճումները տեղափոխելով արտադրության մյուս ճյուղերը և կազմակերպեն ազդպխրին այնտեղ, ուր նրանք դեռևս բացակայում են։

Ինքնաստուգման բրիգադները պետք է նույնպես նշեն ու միջոցներ ձեռք առնեն բրակի վերացման համար։

Ինքնաստուգման ընթացքում ցեխի, խմբակի և հիմնարկի համար ամբողջովին լայն կերպով ընդարձակել գործառնական (տասօրյակային, ամսական) պլանի կազմելու մեթոդները։

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԻՍՑԻՊԼԻՆԱ

Հատուկ ստուգման պետք ե յենթարկվեն աշխատանքային դիսցիպլինայի դրության և բանվորական ուժի հոսունության հարցերը: Չնայած նրան, վոր անցյալ տարվա համեմատությամբ աշխատանքային դիսցիպլինան նկատելի չափով ամրապնդվել ե, այնուամենայնիվ մի շարք հիմնարկներում այդ ուղղությամբ քիչ բան ե արված, իսկ վորոշ տեղերում աշխատանքային դիսցիպլինայի վատացում ե նկատվում:

Ինքնաստուգման կարգով անհրաժեշտ ե յերևան բերել նույնպես բանվորական ուժի խնայման աստիճանը, ստանոկների կորզությունը, սարքավորումների և այլն օգտագործումը:

Ինքնաստուգման ընթացքում, հիմնարկներում աշխատանքային դիսցիպլինան ամրապնդելու համապատասխան աշխատանքն տանելու հետ միասին, անհրաժեշտ ե միևնույն ժամանակ աշխուժացնել արտադրական-ընկերական դատարանների աշխատանքները, նրանց աշխատանքներին պրոֆկազմակերպությունների ու տնտեսավարների կողմից կոնկրետ օգնություն ցույց տալով, ամեն կերպ ընդլայնելով նման կազմակերպությունների ցանցը:

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ինքնաստուգումն օգտագործել նմանապես բանվորական գյուտարարության աշխատանքները լավացնելու համար, խնդիր դնելով վոր [illegible] մի ձեռնարկության գյուտարարների կամավոր ընկերության բր-



БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ջեջեր» չկան: Ինքնաստուգման ընթացքում բանվորական մասսաների, նույնպես և հենց իրենց՝ գյուտարարների ուշադրությունը պետք մոբիլիզացիայի յենթարկել պայքարելու՝ այդ կարևոր ճյուղի աշխատանքի չգնահատելու դեմ, մի քանի տնտեսական ու պրոֆկազմակերպությունների ղեկավարների կողմից բանվորների գյուտերի և արժեքավոր առաջարկների առաջ մղման հարցերին ցույց տրվող բյուրոկրատական վերաբերմունքն արմատախիլ անելու, և նմանապես գյուտարարական աշխատանքների լավացման հարցի շուրջը:

Ինքնաստուգման ընթացքում վերոհիշյալ փաստերը յերևան բերելուն պես գործը հանձնել դատախազության՝ վորպեսզի խիստ պատասխանատվության յենթարկի նրանց, վորոնք խեղդում են բանվոր գյուտարարի ստեղծագործական նախաձեռնությունը և ցուցական դատեր կազմակերպել այդպիսիների վրա:

Դրա հետ միասին հայտարարել արտադրության ռացիոնալիզացիայի, արտադրանքի հատկությունը լավացնելու, ինքնարժեքի իջեցման նոր առաջարկությունների ընդունելություն, նմանապես Մոսկվայի և Լենինգրադի գործարանների օրինակով լայն կերպով գործադրել գյուտերի սոցիալիստական պատվերների և ռացիոնալիզատորական առաջարկությունների կազմումը:

Սոցմրցության պայմանագրի մեջ պետք ե մտցվեն գյուտերի և նրանց իրագործման կոնկրետ պարտավորությունները: Պետք ե գյուտարարների ա-

ՊԵՏ ԱԶԳ ԳՐԱԴԱՐԱՆ Гос Библиотека ՀԱՍԽ-Арм.ССР

մուր կապ ստեղծել հարվածայնության հետ՝ «ամեն մի հարվածային բրիգադան պետք է կոլլեկտիվ գյուտարար դառնա» լոզունգի տակ։

## ՏԻՐԱՊԵՏԵԼ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ, ՏԻՐԱՊԵՏԵԼ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆԸ

Սոցմրցման և հարվածայնության ինքնաստուգման ընթացքում ստորին պրոֆկազմակերպությունները պետք է բացառիկ ուշադրություն դարձնեն տեխնիկական գիտության բարձրացման հարցին՝ «ամեն մի հարվածային, որ մրցում է, և արտադրողության աշխատավոր պետք է տիրապետեն արտադրության տեխնիկային, արտադրության գիտության» լոզունգի իրականացմանը։ Ինքնաստուգումը պետք է առաջ քաշի և ամրապնդի հարվածայինների ու մրցողների մասսայական արշավը՝ հարվածային շարժման տակ տեխնիկական բազայի գնելու համար։ Վերականգնվող սոցպայմանագրերի մեջ պետք է մտցրվեն արտադրության տեխնիկայի և գիտության ուսումնասիրելու և տիրապետելու կոնկրետ պարտավորություններ։

Ինքնաստուգման ընթացքում ձեռնարկել յերեսը դեպի տեխնիկա դարձնելու, տեխնիկային տիրապետելու, արտադրության բոլոր մանրամասնությունները խորապես յուրացնելու և այդ գործում պրոֆ. և տեխնիկական կազմակերպությունների կոնկրետ օգնություն ցույց տալու և տեխնիկական արշավում՝ ինժեներա-տեխնիկական աշխատավորների մասսայական ակտիվ մասնակցության՝ կոնտրոլային և հանդիպական պլաններ կազմելու։ Պետք է մշակել և կազմակերպել խմբակներ և դասընթացքներ բանվորների վորակը բարձրացնելու համար, դասախոսություններ, զրույցներ կազմակերպել արտադրական-տեխնիկական թեմաներով։ Լավացնել արտադրական անկյունների աշխատանքը և այլն։



## ՆԵՐՔԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ ՅԵՎ ԱՆՊԵՏՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

Ինքնաստուգման ընթացքում անհրաժեշտ է ձեռք բերել բանվորական մասսաների ակտիվ մասնակցությունը՝ ձեռնարկի ներքին միջոցների մոբիլիզացիայի և թաքցրած հնարավորությունների յերևան բերելու գործում, ամեն մի հարվածային բրիգադի առաջ խնդիր դնելով, վորպեսզի իր ամենօրյա աշխատանքի ընթացքում նա յերևան բերի ներքին միջոցները։

Դրա հետ միաժամանակ, աչքի առաջ ունենալով այն, վոր մարտ ամիսն անպետք մետաղների հավաքելու ամսօրյակ է լինելու և դրան կարևոր նշանակություն տալով՝ մեքենա-կառուցողական գործարանները և արդյունաբերությունը հումքով ապահովելու համար, անհրաժեշտ է ինքնաստուգման ընթացքում հարվածայինների, մրցողների, բանվորական մասսաների հատուկ ուշադրությունը կենտրոնացնել տարվող ամսօրյակի վրա։

## ՍՈՑՄՐՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԱՌ

Ինքնաստուգման բրիգադները պետք է նմանապես ստուգեն, թե արդյոք տնտեսորգանների կողմից իրագործվում են դիրեկտիվները՝ հարվածայինների սոցպայմանագրում մտցրված ցուցանիշների ու պարտա-

վորությունների հաշվետուի մասին։ Ինչպես է գրված հաշվետուը, և վորքան է համապատասխանում սոցմրցման և հարվածայնության հետագա զարգացմանը։

Ինքնաստուգման ժամանակամիջոցում պետք է պրեմիա տալ լավագույն հարվածայինների ու սոցմըրցության մեջ մասնակցողներին, նույնպես և առանձին հարվածային բրիգադներից նրանց, վորոնք ամենքից առաջ են գնում 1931թ. առաջին յեռամսյակի արտադրական առաջադրությունը կատարելու և աշխատանքի արտադրողականության, արտադրանքի հատկության լավացնելու, ինքնարժեքի իջեցման գործում լավագույն արդյունքներ են տվել։

## ՍՈՑՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԿՆՔՈՒՄ

Սոցպայմանագրերի վերակնքման ժամանակ միջոցներ պետք է ձեռք առնել սոցպայմանագրերի պայմանների ճշտիվ և կոնկրետ լինելու համար։ Պայմանագրերի ցուցանիշները պետք է այնքան պարզ, կոնկրետ և ճշգրիտ լինեն, վորպեսզի նրանց միջոցով ամեն մի բանվոր հեշտությամբ կարողանա ծանոթանալ ինչպես իրեն ցեխի, գործարանի, տվյալի գրության հետ, նույնպես և մրցող ձեռնարկի գրության հետ։

Անհրաժեշտ է պայմանագրի մեջ մտցնել այն կետերը, վորոնք վերաբերում են սոցիալիստական փոխադարձ յերաշխավորության և առաջ գնացող ձեռնարկի կողմից հետ մնացողին ոգնելուն։ Լավագույն հարվածայինների, պրոֆ., նույնպես և Կոմյերիտմիության, կուսակցական ակտիվի ու ինժեներա-տեխ-



նիկական աշխատավորների ուշադրությունը դարձնել՝ հարվածայինների պայմանագրերի ու պարտավորությունների կազմելուն անհրաժեշտ ոգնություն ցույց տալու գործին։

Պայմանագրերի վերակնքելու ժամանակ ուշադրությունը պետք է սրել, վորպեսզի աշխատանքի արտադրականությունը, ինքնարժեքի իջեցումը և այլն, ձեռք բերվեն նորմալ բանվորական ժամանակի սահմաններում, առանց խախտելու աշխատանքի մասին գոյություն ունեցող որենքները։

Ինքնաստուգման ընթացքում լայն կերպով տարածել հետ մնացող հիմնարկներին, նույնպես և ցեխերին կոնկրետ հարցերի վերաբերյալ պուտյովկաների տալու փորձը.—լավացնել, արտադրական խորհրդակցությունների աշխատանքները, մշակել սոցիալիստական պատվերը, կազմակերպել ամենորյա հաշվետուը, առաջադրությունների թվական իրագործման և վորակական տասնորյակային հաշվետուը, լավացնել արտադրանքի հատկությունը, վերացնել բրակը և գործալքումները և այլ հարցերի մասին։

## ՎԵՐՋԱԲԱՆ

> «Մրցության մեջ ամենակարևորը կայանում է նրանում, վոր նա մարդկանց հայացքներում աշխատանքի նկատմամբ արմատական հեղաշրջում է առաջ բերում, վորովհետև մրցությունն՝ աշխատանքը ստորացուցիչ ու ծանր բեռից, վոր նա համարվում եր առաջ, կերպարանափոխվում է պատվի գործի, փառքի գործի, քաջարիության և հերոսության գործի»։(Ընկ. ՍՏԱԼԻՆ)

Ստուգումից հետո վոչ մի ձեռնարկ, ցեխ, բաժանմունք, խմբակ դուրս չպիտի մնան մրցությունից։

Ստուգումը պետք է նպաստի ձեռնարկների ու կոլխոզների միջև սոցմրցության ծավալմանը և բանվորների կողմից՝ կոլխոզներում և սովխոզներում աշխատանքի նոր ձևերի արմատավորելու օգնության գործին:

Ստուգման հետևանքով պետք է ուժեղացնել պրոֆմիությունների կողմից մրցության և հարվածայնության ղեկավարությունը: Պետք է այնպես անել, վորպեսզի ամեն մի ցեխ, կոմիտե կազմված լինի հարվածայիններից, վորպեսզի պրոֆաշխատանքում ամեն մի ֆաբգործկոմ իրենից հարվածային բրիգադա ներկայացնի:

Արտադրական խորհրդակցությունները գործով պետք է դառնան սոցմրցության և հարվածայնության իսկական կազմակերպիչներ: Ինքնաստուգման ընթացքում պետք է այնպես անել, վորպեսզի արտադրական խորհրդակցությունը վոչ միայն գործարանային վարչության միջոցով, այլ և հենց իրեն՝ հարվածային բրիգադների միջոցով կյանքի մեջ կիրառեն այդ առաջարկները. պրոֆմիութենական օրգանները, վորոնք անընդունակ են ղեկավարելու սոցմրցությունը ու հարվածայնությունը—պետք է արձակվեն:

Ագիտպրոփխորհրդի նախագահությունը հիշատակում է, վոր սոցմրցման և հարվածայնության մասսայական ինքնաստուգումը զուգադիպում է նավթային հնգամյակը 2 և կես տարում ավարտելու վերջին ամսվա հետ:

Բաքվի հանքագործները աշխատանքային ենտուզիազմի չտեսնված վերելքով մի անգամ ևս գործով կհաստատեն, վոր նրանք կիրագործեն մեր կուսակցության և



կառավարության առաջադրությունը և իսկապես մարտական պայմաններ կստեղծեն սոցմրցությունն ու հարվածայնությունն իր համապատասխան բարձրության վրա դնելու և աշխատանքի այդ ճյուղում որինակ կծառայեն Բաքվի և Անդրկովկասի մյուս ձեռնարկների համար:

Ամրապնդելով աշխատանքային սոցիալիստական ձևերը, ծավալելով հզոր մասսայական կամպանիա՝ աշխատանքային այդ սոցիալիստական ձևերի զարգացնելու համար, 5-ամյակը չորս տարում, իսկ արդյունաբերության մի քանի ճյուղերում էլ ավելի կարճ ժամանակամիջոցում իրագործող մարտիկների—հարվածայինների նոր շերտեր բարձրացնելով, կապահովենք հնգամյակի 3-րդ—վճռական տարվա պլանների լրիվին իրացումը:

Դա կլինի լավագույն պատասխանը իմպերիալիստներին, վորոնք Խորհրդային Միությունում «ստիպողական աշխատանքի» մասին առակներ են տարածում, ուր աշխատանքը դառել է պատվո գործ, փառքի գործ, քաջարիության և հերոսության գործ:

# ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ

## ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

### ՄԱՄՈՒԼ

1. Խոշոր նշանակություն ունի տարվող ինքնաստուգման կամպանիայի և նրա ընթացքի իր ժամանակին լուսաբանելը: Դրա համար անհրաժեշտ է, վոր

հիմնարկների ու ակումբների պատի թերթերը իրենց աշխատանքը ուղղեն սոցմրցության ինքնաստուգման ընթացքի լուսաբանելու կողմը, ամբողջ բանվորական մասսայի ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկելով սոցմրցության արդֆինպլանի իրագործման, նույնպես և գյուտարարության և ներքին միջոցների ժողովելու, անպետք մնացորդի հավաքելու և այլն խնդիրների շուրջը։

2. Մինչև ինքնաստուգման սկիզբը և ստուգման ժամանակամիջոցում անհրաժեշտ է բացատրական աշխատանքներ տանել՝ զրույցներ և զեկուցումներ անելու միջոցով։

3. Սոցմրցության և հարվածայնության ինքնաստուգման խնդիրների բացատրելու և զեկուցումների համար անհրաժեշտ է օգտագործել ռադիո-հաղորդումները։ Ֆաբգործկոմները պետք է տեղերում կազմակերպեն ռադիոյի միջոցով զրույցների ու զեկուցումների լսելը։

4. Ֆաբգործկոմները պետք է ջոկեն պատրաստված ընկերների մի խմբակ, վորին պետք է հանձնարարվի անկյուններում, ցեխերում, հերթափոխություններում և կազարմաներում զրույցներ կատարելը։

## ԼՈԶՈՒՆԳՆԵՐ ՅԵՎ ՊԼԱԿԱՏՆԵՐ

5. Հանքերում, գործարաններում և ֆաբրիկներում, ցեխերում և փողոցներում սոցմրցության ինքնաստուգման, նույնպես և գյուտարարության, ներքին միջոցների ժողովելու համապատասխան լոզունգներ և պլակատներ կախել։



6. Տեղերում պատրաստել իրեն հիմնարկության արդֆինպլանի իրագործման և սոցմրցությունը լուսաբանող մի շարք պլակատներ։ Նման պլակատներով անհրաժեշտ է սևեռել բանվորական մասսաների ուշադրությունը այն կոնկրետ պատճառների շուրջը, վորոնք արգելք են հանդիսանում իրենց հիմնարկության և արդֆինպլանի սոցմրցման իրագործմանը։

7. Բոլոր անկյուններում և ակումբներում անհրաժեշտ է կազմակերպել հատուկ ցուցահանդեսներ, վորոնք հիմնականում պետք է լուսաբանեն հետևյալը․

ա) տնտեսական-քաղաքական պայմանագրերի ու արդֆինպլանների իրագործումը (բացատրական նկարներ, թվեր և այլն).

բ) հարվածայինների ու հարվածային բրիգադների օրինակելի աշխատանքների ցուցահանդես, նըկարագրելով աշխատանքի բնագավառում ձեռք բերած նվաճումները (գործադրած ժամանակը, ինքնարժեքը և այլն).

գ) բրակի ցուցահանդես.

դ) լավագույն հարվածայինների ու գյուտարարների լուսանկարները, աշխատանքի բնագավառում նրանց արած նվաճումների նկարագրությամբ.

յե) պրոգուլշչիկների լուսանկարները, նկարագրելով այն փաստերը, վորոնց շնորհիվ խախտվել են սոցմրցության և արդֆինպլանի իրագործումը.

զ) սոցմրցության, գյուտարարության հարցերին նվիրված գրականության ցուցահանդես ու լոզունգներ և տվյալ հիմնարկի մասին լրագիրներից կտրված հոդվածներ, տեխնիկական արշավի նվիրված գրականություն։

## ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ակումբները պետք է մասսայական մեծ աշխատանք ծավալեն, օգտագործելով դրա համար աշխատանքի բազմակողմանի ձևերը (լոզունգներ, պլակատներ, հարց ու պատասխանի երեկոներ, զեկուցումներ, զրույցներ, ձեռնարկների սոցմրցման մասնակիցների հանդիպում, առանձին ձեռնարկների համար երեկույթներ՝ նվիրված տվյալ ձեռնարկի սոցմրցության, հարվածայնության և գյուտարարության խնդիրներին, պրոգուլչիկների երեկույթներ, նույնպես լուսաբանելով ներքին միջոցների ժողովելու, անպետք մնացորդի հավաքելու և այլ հարցեր։ Ակումբների կենդանի լրագիրները և ագիտ-պրոպ բրիգադները նախապատրաստվում են ակումբներում, նույնպես և ձեռնարկներում՝ հաշվի ընդմիջումների ժամանակ, ԺԱԿՏ-երում և անկյուններում ցերեկույթների համար, դրա համար օգտագործելով սոցմրցության և արդֆինպլանի կատարման, անպետք ցերկաթեղենի հավաքելու, գյուտարարության նվիրված տեղական նյութերը։ Նմանապես անհրաժեշտ է հիշատակել և նրանց, վորոնք արգելք են հանդիսանում արդֆինպլանի իրագործմանը։ Գրադարաններն անհրաժեշտ է նախապատրաստել մի շարք ցուցահանդեսներ՝ սոցմրցության և սոցմրցության և արդֆինպլանի, գյուտարարության, նույնպես և տեխնիկական արշավի հարցերին նվիրված գրականության. Նախապատրաստել «վիկտորինա» (օգտագործելով տեղական նյութերը) սոցմրցման և հարվածայնության նվիրված, և նրանցով արտադրողականության մեկնել։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0202824

667
3616-53